


«ԱՐԱԳԱԾ ՊԵՌԼԻՏ» ԲԲԸ

Վնասակար նյութերի սահմանային թույլատրելի
արտանետումների (ՍԹԱ) նորմատիվների նախագիծ

«ԱՐԱԳԱԾ ՊԵՌԼԻՏ» ԲԲԸ տնօրեն



Ա. Հարթունյան
(անուն, ազգանուն)

2020թ.

ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՑԱՆԿ

«Ակունք Ֆիրմա» ՍՊԸ տնօրեն՝

Հ. Նիկողոսյան

«Ակունք Ֆիրմա» ՍՊԸ ճարտարագետ՝

Ս.Ղարսյան

ԱՆՈՏՍՑԻԱ

Համաձայն ՀՀ կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի N1673-Ն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ՍԹԱ նորմատիվների նախագիծ կազմվում է այն տնտեսվարող սուբյեկտների համար, որոնք ունեն արտանետման այնպիսի աղբյուրներ, որոնց արտանետումների առավելագույն նախագծային ցուցանիշների հիման վրա հաշվարկված ՕՊՕ-ն մեկ տարում գերազանցում է երկու մլրդ մ³ չափանիշը, կամ վարկյանում գերազանցում է երկու հազ. մ³ չափանիշը [1]:

ՕՊՕ մեկ տարում կամ մեկ վարկյանում հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՕՊՕ} = \sum_i^n \frac{U_i}{\text{ՍԹԱ}_i}$$

որտեղ՝ U_i -ն i -րդ նյութի առավելագույն արտանետումն է համապատասխանաբար մեկ տարում կամ վարկյանում ըստ ընկերության նախագծի կամ տեխնոլոգիական ռեգլամենտի (մգ/տարի կամ մգ/վրկ)

ՍԹԱ_i -ն i -րդ նյութի համապատասխանաբար միջին օրեկան կամ միանգամյա առավելագույն սահմանային թույլատրելի խտությունն է (մգ/մ³):

Ընկերության համար ՕՊՕ-ն հաշվարկվել է մեկ տարվա համար:

ՕՊՕ-ի հաշվարկը (պայթեցման աշխատանքներից արտանետումները հաշվի առած)

Աղտոտող նյութերի անվանումը	ՍԹԱ ա.մ., մգ/մ ³	Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը, U_i , մգ/տարի	Օդի պահանջվող օգտագործումը, ՕՊՕ, մ ³ /վրկ $\text{ՕՊՕ} = \sum_i^n \frac{U_i}{\text{ՍԹԱ}_i}$
1	2	3	4
1. Պեռլիտի փոշի	0,3	96374000000	321246666667
2. Ածխածնի օքսիդ	5	16346000000	3269200000
3. Ազոտի օքսիդներ	0,085	2758000000	32447058824
ԸՆԴԱՄԵՆԸ			356962925490

*- ՀՀ կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի N1673-Ն որոշում [1]

ՕՊՕ-ն գերազանցում է 2 միլիարդ մ³/տարի շեմը (356,9 միլիարդ մ³/տարի), ուստի պետք է մշակել սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվներ՝ արտանետման աղբյուրների կամ դրանց խմբերի համար:

Այս նախագիծով մշակվել է «Արագած Պեռլիտ» ԲԲ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) պատկանող հանքավայրի և պեռլիտի արտադրության գործարանի անշարժ աղբյուրներից մթնոլորտն աղտոտող վնասակար նյութերի սահմանային թույլատրելի արտանետումները (ՍԹԱ):

ՄԹԱ նորմատիվների նախագիծը գիտատեխնիկական նորմատիվ է, որը հաստատվում է մթնոլորտն աղտոտող յուրաքանչյուր կոնկրետ աղբյուրի և դրանցից արտանետվող յուրաքանչյուր վնասակար նյութի համար, պայմանով որ արտանետվող առանձին և բոլոր արտանետումների ամբողջությունը արտանետվելուց և մթնոլորտում փոխարկումների ենթարկվելուց հետո չի ստեղծի մթնոլորտային օդի համար սահմանված չափանիշները գերազանցող գետնամերձ խտություններ:

ՄԹԱ-ի մշակումը իրականացվում է ձեռնարկության վնասակար ազդեցությունը շրջակա միջավայրի վրա սահմանափակելու նպատակով:

Աշխատանքում ներկայացված են մթնոլորտ արտանետվող վնասակար արտանետումների որակական և քանակական բնութագրերը, ինչպես նաև ձեռնարկության բնութագիրը որպես մթնոլորտն աղտոտող աղբյուրի:

Նախագծում դիտարկված են արտանետումների 3 տեղամասեր, իսկ մթնոլորտ արտանետվող վնասակար արտանետումների աղբյուրների քանակը 7-ն է:

- Բացահանք - 1 աղբյուր,
- Լցակայան - 1 աղբյուր,
- Պեղիտի գործարան - 5 աղբյուր:

Ընկերության արտանետումները պարունակում են աղտոտող նյութերի 3 անվանում՝ փոշի անօրգանական (SiO_2 20-70%, պեղիտի փոշի), ածխածնի օքսիդներ և ազոտի օքսիդներ:

Մթնոլորտ վնասակար արտանետումների տարեկան քանակները և միանգամյա առավելագույն սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների արժեքները բերված են աղյուսակ 1-ում: Մթնոլորտ արտանետվող նյութերի տարեկան քանակը կազմում է 96.38 տոննա: Զարկային արտանետումների բնութագիրը բերված է աղյուսակ 2-ում: Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի պարամետրերը և քանակները ՄԹԱ-ի հաշվարկների համար բերված են աղյուսակ 3-ում: Մոտակա 5 տարիների ընթացքում ձեռնարկության արտադրողականության փոփոխություն չի նախատեսվում, այդ պատճառով աղյուսակ 3-ի հեռանկարայունակը չի լրացվում:

Համաձայն «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի, բնությանը հասցված տնտեսական վնասի հաշվարկը կատարվում է համաձայն «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 21.01.2005թ. թիվ N91-Ն որոշմանը [2]:

Ընկերության գործունեությունից առաջացած արտանետումների հետևանքով շրջակա միջավայրին հասցված տնտեսական վնասի հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$U_i = \tau_q \cdot \Phi_g \cdot \sum \Phi_i \cdot \varphi_i,$$

որտեղ՝ τ_q - աղտոտող աղբյուրի շրջապատի գործակիցն է՝ 1,

Φ_g - փոխանցման գործակիցն է՝ 1000 դրամ,

φ_i - նյութի համեմատական վնասակարության մեծությունն է,

Φ_i - տվյալ նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է, որը հաշվում են հետևյալ բանաձևով՝

$$\Phi_i = q \cdot (3 S_{wi} - 2 U \theta U),$$

որտեղ՝ q - անշարժ աղբյուրների համար հավասար է 1,

S_{wi} - տվյալ նյութի արտանետման քանակն է:

Շրջակա միջավայրին հասցված տնտեսական վնասի հաշվարկը բերված է աղյուսակի տեսքով:

Ընկերության գործունեության հետևանքով աղտոտող նյութերի արտանետումներից տնտեսական վնասի հաշվարկը

ՀՀ	Վնասակար արտանետումների անվանումը	Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը, S_i տ/տարի	Գործակից, q	Գործակից, $\Phi_i = S_{wi} q$	φ_i	τ_q	Տնտեսական վնաս, ՀՀ դրամ $U = 1000 \tau_q \sum \Phi_i \varphi_i$, դրամ/տարի
1.	Անօրգանական փոշի (SiO_2 20-70%)	96,374	1	96,374	10	1	963740
2.	Ածխածնի օքսիդ	16,346	1	16,346	1	1	16346
3.	Ազոտի օքսիդներ	2,758	1	2,758	12,5	1	34475
Ընդամենը							1014561

Վնասակար նյութերի մթնոլորտ արտանետումների հետևանքով շրջակա միջավայրին հասցված տնտեսական վնասը գնահատվում է տարեկան 1 014 561 դրամ [2]:

Մթնոլորտն աղտոտող արտանետումների ցրման հաշվարկի արդյունքում հաստատված է, որ մթնոլորտն աղտոտող նյութերի մերձգետնյա կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գոտու համար սահմանված նորմերում:

«Արագած Պեղիտ» ԲԲ ընկերության բոլոր արտանետումները հանձնարարվում են որպես 2021թ. սահմանային թույլատրելի արտանետումներ: ՍԹԱ նորմատիվներին հասնելու ժամանակը համարվում է հաստատման պահից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆՈՏԱՑԻԱ	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	7
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ	9
2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՈՐՊԵՍ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴՆ ԱՂՏՈՏՈՂ ԱՂԲՅՈՒՐ	11
3. ՍԹԱ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԵԼՔԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՍԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ	20
4. ՎՆԱՍՄԱԿԱՐ ՆՑՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՑՐՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԸ	20
4.1. Օդերևութաբանական բնութագիրը	20
4.2. Մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակը	21
4.3. Հաշվարկի հակիրճ արդյունքները	22
5. ՍԹԱ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ, ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԸ ..	22
6. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐՏԱՆԵՏՄԱՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ	23
7. ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ԿԼԻՄԱՑԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑԱԴՈՒՄՆԵՐԸ	24
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Արագած Պեոլիտ» ԲԲ ընկերության մթնոլորտ արտանետումների սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագիծը մշակված է ՀՀ Բնապահպանության օրենսդրության գործող նորմերի և նորմատիվ ակտերի պահանջների համաձայն:

Սահմանային թույլատրելի արտանետումների նորմավորման աշխատանքների կատարման համար հիմք են հանդիսացել.

- «Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 1999 թվականի մարտի 30-ի N 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի N 953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին » ՀՀ կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի N1673-Ն որոշումը:

- «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-սթկ) նորմատիվները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006թ փետրվարի 2-ի N 160-Ն որոշումը:

- «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետեվանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005թ հունվարի 25 N 91-Ն

- «Կազմակերպությունների աշխատատեղերում աշխատանքային գոտու օդում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները» N 2.2.5-004-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին ՀՀ առողջապահության նախարարի 2020թ դեկտեմբերի 6-ի N 27-Ն հշամանը:

- ОНД 1-86; Методика расчета концентраций в атмосферном воздухе вредных веществ содержащихся в выбросах предприятий. Ленинград. Гидрометеоиздат 1987г.

ՄԹԱ-ի նախագիծը հանդիսանում է գիտա-տեխնիկական նորմատիվ հաստատված մթնոլորտն աղտոտող յուրաքանչյուր կոնկրետ աղբյուրի համար՝ պայմանով, որ այդ և բնակավայրի բոլոր աղբյուրների համախմբից մթնոլորտն աղտոտող վնասակար նյութերի արտանետումները՝ հաշվի առած մթնոլորտում դրանց փոխարկումը և ցրումը, ինչպես նաև կազմակերպությունների զարգացման հեռանկարները, չեն ստեղծի սահմանված նորմատիվային արժեքները գերազանցող մերձգետնյա կոնցենտրացիաներ:

Աղտոտող նյութերի արտանետումների նորմատիվը որոշվում է որպես աղտոտող նյութի առավելագույն քանակ.

- յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար (գ/վրկ) որոշված տեխնոլոգիական սարքավորումների առավելագույն բեռնվածության դեպքում՝ հաշվառված նշված ռեժիմի վրա աշխատանքների ժամանակի 20 րոպեական միջակայքում միջինացումը,

- որը կարող է մթնոլորտ արտանետվել արտանետումների որոշակի աղբյուրներից տարվա ընթացքում (տ/տարի)՝ որոշված որպես արտանետումների աղբյուրներից աղտոտող նյութերի արտանետումների միջին արժեքների (գ/վրկ) և տեխնոլոգիական սարքավորումների տարեկան աշխատաժամերի արտադրյալ:

- որը կարող է մթնոլորտ արտանետվել հաստատուն աղբյուրների համախմբումից տարվա ընթացքում՝ որոշված որպես աղտոտող նյութերի առավելագույն արտանետումների գումար (գ/վրկ) և տարեկան արտանետումների գումար (տ/տարի):

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընկերությունը զբաղվում է պեռլիտի հանքաքարի արդյունահանմամբ և դրա հետագա վերամշակման աշխատանքներով, հանդիսանում է նախկին ԱՐԱԳԱԾ ՊԵՌԼԻՏ Գործարանի իրավահաջորդը, որի գործունեությունը մնացել է նույնը:

Ընկերությունը գնտվում է ՀՀ Արագածոտնի մարզում, Արագածավան գյուղից մոտ 750 մ դեպի հյուսիս-արևելք հեռավորության վրա, Արագածավան գյուղի երկաթգծի կայարանից մոտ 1,63 կմ հեռավորության վրա:

Ընկերության իրավաբանական հասցեն ՀՀ, Արագածոտնի մարզ, Արագածավան գյուղ, Գործարանային 2:

Պետ. ռեգիստրի վերագրանցման համարը՝ 94.130.00249, տրված 31.03.1998թ.:

Պետական ռեգիստրի վկայականի համարը - 040825, տրված 31.03.1998թ.:

Ընկերության նախագծի բնապահպանական փորձաքննության անցկացման համարը և տրման տարեթիվը- ԲՓ-45, առ 31.03.2005թ.:

Գործարանին մոտակա բնակելի գյուղը՝ գ. Արագածավան, գտնվում է 650-700 մ հեռավորության վրա:


Լցակայանին մոտակա բնակելի գյուղը՝ գ. Արտենի, գտնվում է 5 կմ հեռավորության վրա:

Բացահանքին մոտակա բնակելի գյուղերը՝ գ. Կանչ և գ. Հակո, գտնվում են համապատասխանաբար 3 և 3,7 կմ հեռավորությունների վրա:

**«Արագած Պեռլիտ» ԲԲԸ տեղանքի իրավիճակային քարտեզ
բնակելի տարածքների նշումով**



«Արագած Պեոլիտ» ԲԲԸ քարտեզ-սխեմա արտանետման աղբյուրների նշումով



2. ԿԱԶՄԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՈՐՈՇԵՍ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂՆ ԱՂՏՈՏՈՂ ԱՂԲՅՈՒՐ

Ընկերության գործունեությունից վնասակար նյութերի մթնոլորտ արտանետման աղբյուր են հանդիսանում՝ բացահանքը, լցակայանը և պեոլիտի գործարանը:

Բացահանք Բացահանքը կարելի է դիտարկել ըստ մակերեսի հավասարաչափ բաշխված միասնական արտանետումների աղբյուր: Արտանետումները գոյանում են հորատման, պայթեցման, հանման, բեռնման աշխատանքների ժամանակ (աղբյուր B1): Առաջացող արտանետումներն են՝

▪ *փոշի* – հորատանքների և պայթանքների հորատման, հանութաբարձման աշխատանքներից (էքսկավատոր, բուլդոզեր):

Որպես փոշու և գազերի (ածխածնի և ազոտի օքսիդներ) զարկային արտանետումների աղբյուր են ծառայում պայթեցման աշխատանքները: Փոշու և գազերի էմիսիայի տևողությունը պայթեցման աշխատանքների ժամանակ կազմում է 10-15 րոպե, այդ պատճառով դրանք համարվում են զարկային և մթնոլորտի աղտոտման մակարդակի հաշվառման ժամանակ հաշվի չեն առնվում:

Փոշու արտանետումների կրճատման համար իրականացվում է հորատման ժամանակ՝ չոր փոշեմաքրում, իսկ հանութաբարձման աշխատանքների ժամանակ՝ լեռնային զանգվածի ջրցանում:

Լցակույտ

Լցակույտը ձևավորվում է բուլդոզերով: Լցակույտը իրենից ներկայացնում է փոշու անկազմակերպ արտանետումների աղբյուր: Արտանետումները առաջանում են լցակույտաառաջացման և լցակույտի մակերեսից փոշու բնական տարուքի հետևանքով: Լցակույտը ևս դիտվում է որպես մթնոլորտի աղտոտման հարթակային արտանետումների աղբյուր (աղբյուր B2):

Փոշու արտանետումների կրճատման համար իրականացվում է լցակույտի մակերեսի ջրցանում:

Պեռլիտի գործարան

0-600 մմ խոշորությամբ պեռլիտի հանքաքարը ավտոինքնաթափերով բարձվում է ջարդման տեղամասի ընդունիչ բունկեր: Ընդունիչ բունկերից ПП2-120 թիթեղավոր սնուցիչի միջոցով հումքը նախ տրվում է СМД-111 մակնիշի այտավոր ջարդիչ, որից հետո քարմաղի վրա: Քարմաղից հետո տեսակավարվում է երկու դասի՝ 0,0-5 մմ և +5 մմ: +5 մմ դասը փոխակրիչով տրվում է СМД-75 ռոտորային ջարդիչ՝ ջարդման երկրորդ փուլ: Ռոտորային ջարդիչը քարմաղի հետ աշխատում է փակ ցիկլով: Տվյալ տեղամասում փոշու արտանետումները ДН-10.5 ծխաքարշով տրվում են մաքրման խմբային ցիկլոն՝ 4x600մմ, որից հետո արտանետվում են մթնոլորտ 800 մմ տրամագծով և 18 մ բարձրությամբ խողովակով (աղբյուր B3):

0,0-5,0 մմ դասը փոխակրիչով տեղափոխվում է մանրեցման և տեսակավորման մասնաշենք, որտեղից էլ անմիջապես էլևատորով տեղափոխվում է վառարան: Տվյալ տեղամասում գործում է ասպիրացիոն համակարգ: Մաղերի աշխատանքից գոյացած փոշին ներծծվում է ДН-12.5 ծխաքարշով և կրկնակի մաքրվում է նախ խմբային փոշեզատիչում՝ 4x900մմ, այնուհետև թաց գազազտիչում, որից հետո արտանետվում է մթնոլորտ 1000 մմ տրամագծով և 20 մ բարձրությամբ խողովակով (աղբյուր B4):

0,0-5 մմ դասը էլևատորով տրվում է 2մ տրամագծով և 12 մ երկարությամբ թմբուկային վառարան՝ չորացման համար: Վառարանում, որպես վառելիք, օգտագործվում է բնական գազ: Այս տեղամասում գազերը ներծծվում է ДН-24 ծխաքարշով և տրվում է մարտկոցային

ցիկլոն՝ 2 հատ 60x150մմ, այնուհետև էլեկտրոֆիլտր, որից հետո արտանետվում են մթնոլորտ 2000 մմ տրամագծով և 60 մ բարձրությամբ խողովակով (աղբյուր B5):

Վառարանից հետո արգասիքը ուղղվում է միջանկյալ գետեղարաններ: Միջանկյալ գետեղարանների բեռնաթափումն իրականացվում է ՈւՄ-30 ժապավենային սնուցիցներով:

0,0-5 մմ չորացված դասը տրվում է 6 հատ ГИД-5 և 4 հատ Могензен քարմաղերի վրա, որից հետո տեսակավորվում է 0,0-0,63 մմ և 0,63-5 մմ դասերի:

0,63-5 մմ դասը փոխակրիչներով տրվում է մանր ջարդման «Տուրբո» ջարդիչ, որտեղ մանրեցվում է մինչև 0,63 մմ: «Տուրբո» ջարդիչը քարմաղի հետ աշխատում է փակ ցիկլով:

0,0-0,63 մմ դասը փոխակրիչի և էլևատորի միջոցով տրվում է զատիչ սարք, որտեղ բաժանվում է 0,15-0,63 մմ և 0,0-0,15 մմ չափամասերի: Այս տեղամասում գազերը ներծծվում են ДН-13.5 ծխաքարշով և մաքրվում են ճկափողային զտիչում, որից հետո արտանետվում են մթնոլորտ 1200 մմ տրամագծով և 20 մ բարձրությամբ խողովակով (աղբյուր B6):

0,0-0,15 մմ դասը փոխակրիչների և ЭЛ-400 էլևատորի միջոցով բարձվում է 960 խ.մ տարողությամբ սիլոսային բունկերի մեջ:

0,15-0,63 մմ չափի պատրաստի արտադրանքը փոխակրիչների և 42 մ բարձրությամբ էլևատորների համակարգի միջոցով բարձվում է 4800 խ.մ ընդհանուր տարողությամբ սիլոսային բունկերներ:

Սիլոսների բեռնաթափումը կատարվում է երկաթգծային տրանսպորտի կամ ավտոտրանսպորտի համար նախատեսված սարքավորումների միջոցով: Սիլոսային բունկերներում արտանետումները ներծծվում են ДН-8 ծխաքարշով և մաքրվում են ճկափողային զտիչում, որից հետո արտանետվում են մթնոլորտ 800 մմ տրամագծով և 12 մ բարձրությամբ խողովակով (աղբյուր B7):

Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակական հաշվարկները կատարվել է գործող մեթոդակարգերի համաձայն [3-5]:

Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի ցանկը բերված է աղյուսակ 1-ում:

Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի ցանկը (առանց զարկային արտանետումների)

NN	Նյութերի անվանումը	ՄԹԿ, միանգամյա առավելագույն, մգ/մ ³	Նյութերի արտանետումը, տ/տարի
1.	Պեռլիտի փոշի	0.3	95.59
2.	Ածխածնի օքսիդ	5.0	16.09
3.	Ազոտի օքսիդներ	0.085	2.68
ԸՆԴԱՄԵՆԸ			114.36

Զարկային արտանետումների բնութագիրը

Բացահանքում կատարվում են պայթեցման աշխատանքներ: Պայթյունի ժամանակ տեղի է ունենում զարկային արտանետում: Մթնոլորտ են արտանետվում հանքային փոշի, ազոտի և ածխածնի օքսիդներ: Զարկային արտանետումների հաշվարկը կատարված է համաձայն [4] մեթոդակարգի և բերված է աղյուսակ 2-ում:

Զարկային արտանետումներ ունեցող աղբյուրների թվարկումը և բնութագիրը

Արտադրամասի (տեղամասի) և աղբյուրների անվանումները	Նյութի անվանումը	Նյութի զարկային արտանե- տումը, տ/զարկ	Արտանետման պարբերա- կանությունը, (անգամ/տարի)	Արտանետման տևողությունը, վրկ	Զարկային արտանետումների տարեկան քանակությունը, տ
Բացահանք	Ածխածնի օքսիդ	0.128	2	600	0.256
	Ազոտի օքսիդներ	0.039			0.078
	Անօրգանական փոշի	0.392			0.784

Զարկային արտանետումները հաշվի են առնված միայն արտանետման չափաքանակ-ներում տարեկան կտրվածքով: Դրանց համար չի իրականացվում ցրման հաշվարկ և դրանք չեն կարող ընդգրկված լինել տվյալ նյութի առավելագույն միանգամյա (զ/վրկ) արտանետման չափաքանակում:

ՄԹԱ նորմատիվների հաշվարկի համար ադոտտող նյութերի պարամետրերը

Արտադրություն արտադրամաս	Ադոտտող նյութերի առաջացման աղբյուրները			Աշխատաժամը տարում		Արտանետման աղբյուրի անվանումը		Աղբյուրների քանակը		Աղբյուրի կարգաթիվը	
	անվանումը	քանակը									
		ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1. Բացահանք (հորատում, հանքաքարի և դատարկ ապարների բեռնում)	Հորատման հաստոցներ	1		4160		անկազմակերպ		1		B1	
	Էքսկավատոր	1									
2. Լցակույտ (դատարկ ապարների բեռնաթափում, փոշի լցակույտի մակերեսից)	Բուլդոզեր, բեռնաթափման աշխատանքներ	1		6888		անկազմակերպ		1		B2	

աղյուսակ 3-ի շարունակությունը

Արտադրություն արտադրամաս	Աղտոտող նյութերի առաջացման աղբյուրները			Աշխատաժամերի տարեկան քանակը		Արտանետման աղբյուրի անվանումը		Աղբյուրների քանակը		Աղբյուրի կարգաթիվը	
	անվանումը	քանակը									
		ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
3. Պեղիսի գործարան											
3.1 Խոշոր և մանր ջարդման բաժանմունք	բունկեր	1		4160		կազմակերպված		1		B3	
	այտավոր ջարդիչ	1									
	ռոտորային ջարդիչ	1									
	փոխակրիչներ	3									
	քարմաղ	1									
3.2 Նախնական տեսակա- վորման բաժանմունք	փոխակրիչներ	3		4160		կազմակերպված		1		B4	
3.3 Չորացման տեղամաս	թմբուկային վառարան	1		4160		կազմակերպված		1		B5	
	փոխակրիչներ	8									
	զատիչ	1									
	«Տուրբո» ջարդիչ	1									
3.4 Տեսակավորման տեղամաս	մաղեր	10		4160		կազմակերպված		1		B6	
	փոխակրիչներ	4									
3.5 Սիլոսային բունկերներ	սիլոս	2		4160		կազմակերպված		1		B7	
	փոխակրիչներ	2									

աղյուսակ 3-ի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը		Աղբյուրի բարձրությունը, մ		Աղբյուրի տրամագիծը/լայնությունը, մ		Գազաօդային խառնուրդի պարամետրերն արտանետման աղբյուրի ելքում					
						արագությունը, մ/վրկ		ծավալը, մ³/վրկ		ջերմաստիճանը, °C	
Նվ	Հ	Նվ	Հ	Նվ	Հ	Նվ	Հ	Նվ	Հ	Նվ	Հ
11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
B1		2		175		1.9*		-		9.3*	
B2		12		350		1.9*		-		9.3*	
B3		18		0.8		11.3		5.68		20	
B4		20		1		14.4		11.30		20	
B5		60		2		10		31.40		100	
B6		20		1.2		14.4		16.28		20	
B7		12		0.8		4		2.01		20	

* - ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» [6]

աղյուսակ 3-ի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը		Կոորդինատները քարտեզ-սխեմայում, մ				Փոշեգազամաքրման սարքերի անվանումը		Մաքրման ենթակա նյութերը		Մաքրման միջին աստիճանը	
		կետային աղբյուրի, աղբյուրների խմբի կենտրոնի կամ գծային աղբ. 1-ին ծայրի		գծային աղբյուրի 2-րդ ծայրի				Ապահովվածության գործակիցը, %		Մաքրման առավելագույն չափը, %	
Ն.Վ.	Հ	X ₁	Y ₁	X ₂	Y ₂	Ն.Վ.	Հ	Ն.Վ.	Հ	Ն.Վ.	Հ
11	12	23	24	25	26	27	28	29	30	31	32
B1		7878	8632,5	8072	8623	ջրցանում		փոշի, 60		80	
B2		7363	6755	7225,5	6488	ջրցանում		փոշի, 60		80	
B3		4704,5	4874,5	-	-	խմբային փոշեգատիչ		փոշի, 70		90	
B4		4788	4901,5	-	-	խմբային փոշեգատիչ		փոշի, 90		98	
B5		4913,5	4875,5	-	-	ճկափողային գատիչ		փոշի, 95		98	
B6		4833	4877	-	-	ճկափողային գատիչ		փոշի, 95		98	
B7		4819	4832,5	-	-	ճկափողային գատիչ		փոշի, 95		98	

աղյուսակ 3-ի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը		Նյութի անվանումը	Աղտոտող նյութերի արտանետումները						ՍԹԱ հասնելու տարին
			ՆՎ			Հ (ՍԹԱ)			
ՆՎ	Հ		գ/վրկ	մգ/մ ³	տ/տարի	գ/վրկ	մգ/մ ³	տ/տարի	
11	12	33	34	35	36	37	38	39	40
B1		Փոշի անօրգանական (SiO ₂ 20-70%)	0,0286		0,42				
B2		Փոշի անօրգանական (SiO ₂ 20-70%)	3,1561		78,26				
B3		Փոշի անօրգանական (SiO ₂ 20-70%)	0,34354		5,14				
B4		Փոշի անօրգանական (SiO ₂ 20-70%)	0,0312		0,47				
B5		Փոշի անօրգանական (SiO ₂ 20-70%)	0,59282		8,88				
		Ածխածնի օքսիդ	1,074		16,09				
		Ազոտի օքսիդներ	0,179		2,68				
B6		Փոշի անօրգանական (SiO ₂ 20-70%)	0,14244		2,13				
B7		Փոշի անօրգանական (SiO ₂ 20-70%)	0,01907		0,29				

3. ՍԹԱ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԵԼՔԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ելակետային տվյալների ամբողջականությունը և հավաստիությունը հիմնավորված է հաշվարկային մեթոդակարգերով:

ՍԹԱ հաշվարկի ելակետային տվյալները կազմվել և հաշվարկվել են ГОСТ 17.2.3.02-78-ին համապատասխան:

Հաշվարկները կատարվել են համաձայն գործող մեթոդակարգերի [3÷5]:

Նստեցման չափազուրկ գործակիցը գազանման վնասակար նյութերի և մանր դիսպերսության փոշու համար, որոնց նստեցման կարգավորված արագությունը չի գերազանցում 3-5 սմ/վրկ, կազմում է 1, խոշոր դիսպերսության փոշու համար մաքրման բացակայության դեպքում՝ 3, մաքրման դեպքում՝ 2:

4. ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՑՐՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԸ

4.1. Օդերևութաբանական բնութագիրը

Աղյուսակ 4-ում բերված են ՀՀ Արտակարգ Իրավիճակների Նախարարության «Հայաստանի հիդրոթերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայության» ՊՈԱԿ-ի տրամադրած կլիմայական բնութագրերի համաձայն տեղանքի մթնոլորտում աղտոտող նյութերի ցրման պայմանները որոշող օդերևութաբանական բնութագրերն ու գործակիցները (հավելված 3) [6]:

Տեղանքի ռելիեֆի հաշվարկային գործակիցը՝ η -ն, հավասար է 1-ի, քանի որ կազմակերպության տարածքում 1 կմ շառավղով բարձրությունների տարբերությունը չի գերազանցում 50 մ-ը: Տեղանքի ռելիեֆի գործակցի մեծության վերաբերյալ հաշվարկը բերված է հավելված 1-ում:

**Մթնոլորտում աղտոտող նյութերի ցրման պայմանները որոշող
օդերևութաբանական բնութագրերն ու գործակիցները**

Բնութագրերի անվանումը	Մեծությունը
Մթնոլորտի ստրատիֆիկացիայի գործակիցը, A	200
Տեղանքի ռելիեֆի գործակիցը	1,0
Տարվա ամենաշոգ ամսվա օդի միջին առավելագույն ջերմաստիճանը, T, °C	25,0
Միջին տարեկան քամիների վարդը, %	
Հյուսիս	21
Հյուսիս - Արևելք	23
Արևելք	9
Հարավ - Արևելք	4
Հարավ	2
Հարավ - Արևմուտք	6
Արևմուտք	7
Հյուսիս - Արևմուտք	16
Անդրոր	21
Քամու բազմամյան միջին արագությունը՝ մ/վրկ, որը հնարավոր է 20 տարին մեկ անգամ 5% ապահովվածությամբ	6
Քամու բազմամյան միջին առավելագույն արագությունը՝ մ/վրկ, որը հնարավոր է 20 տարին մեկ անգամ 5% ապահովվածությամբ	20*

*- ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ սեպտեմբերի 26 N 167-Ն հրաման [6]

4.2. Մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակը

Մթնոլորտում աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները, մգ/մ³, վերցված են ՀՀ Բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքէջից (ըստ բնակչության քանակի, հավելված 2) [7]:

Ֆոնային կոնցենտրացիայի արժեքներն են.

ՀՀ	Անվանումը	Կոնցենտրացիա, մգ/մ ³	Կոնցենտրացիա, ՍԹԿ միավոր
1	փոշի	0,2	0,4
2	ծծմբի երկօքսիդ	0,02	0,04
3	ազոտի օքսիդներ	0,008	0,04
4	ածխածնի օքսիդ	0,4	0,08

4.3. Հաշվարկի հակիրճ արդյունքները

Մթնոլորտն աղտոտող արտանետումների ցրման հաշվարկը կատարվել է համա-կարգչային «Էկոլոգ 4.6» ծրագրով՝ Շրջակա Միջավայրի նախարարության 18 փետրվարի 2020թ. № 64-Լ հրամանի համաձայն:

Վնասակար նյութերի ցրման հաշվարկի արդյունքները սանիտարապաշտպանիչ գոտու (ՄՊԳ) եզրագծում, առավելագույն ՍԹԿ միավոր

ՀՀ	Անվանումը	Հաշվարկային առավելագույն մերձգետնյա կոնցենտրացիաները ՍԹԿ միավորով					
		Առավելագույն մերձգետնյա կոնցենտրացիա	ՄՊԳ եզրագծին	Մոտակա բնակելի գոտում, ֆոնային կոնցենտրացիաները հաշվի առած			
				գ.Արագածավան	գ. Արտենի	գ. Հակո	Գ. Կանչ
1.	Փոշի անօրգանական	0,54	0,54	0,434	0,406	0,406	0,408
2.	Ածխածնի օքսիդ	0,00	0,00	0,08	0,08	0,08	0,08
3.	Ազոտի օքսիդներ	0,00	0,00	0,04	0,04	0,04	0,04

Ածխածնի օքսիդի և ազոտի օքսիդների արտանետումների համար ցրման հաշվարկ չի իրականացվել՝ ելնելով հաշվարկի նպատակահարմարության չափորոշիչից (ավտոմատ որոշում է «Էկոլոգ 4.6» ծրագիրը, հավելված 4) :

Վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքում հաստատված է, առավելագույն մերձգետնյա կոնցենտրացիաները սանիտարապաշտպանիչ գոտու եզրագծում գտնվում են նորմերի սահմաններում:

5. ՍԹԱ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ, ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԸ

Քանի որ վնասակար արտանետումների ցրման արդյունքում մերձգետնյա կոնցենտրացիաները գտնվում են նորմերի սահմաններում, այդ իսկ պատճառով առաջարկվում է 2 և 3 աղյուսակների տվյալներն ընդունել որպես սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվներ:

ՄԹԱ նորմատիվներ հասնելու միջոցառումների ծրագիր

Աղյուսակ 5

N/N ը/կ	Միջոցառումների անվանումը և աղտոտման աղբյուրների համարը	Իրականացման ժամկետը	Վնասակար նյութ(եր)ի արտանետումը մինչև միջոցառումը		Վնասակար նյութ(եր)ի արտանետումը միջոցառումների իրականացնելուց հետո	
			գ/վրկ.	տ/տարի	գ/վրկ.	տ/տարի

Աղյուսակ 5-ը չի լրացվում, քանի որ արտանետումների արդյունքում ձևավորված աղտոտող նյութերի մերձգետնյա կոնցենտրացիաները չեն գերազանցում համապատասխան ՄԹԿ-ները:

6. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐՏԱՆԵՏՄԱՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ

Ընկերությանը առաջարկվող արտանետման չափաքանակները ներկայացված են աղյուսակ 6-ում:

**Ընկերության անշարժ աղբյուրներից վնասակար նյութեր մթնոլորտ արտանետելու
չափաքանակներ / արտանետման թույլտվություններ**

Աղյուսակ 6

	Աղտոտող նյութեր	Ընդհանուր արտանետումը			Ընդամենը	
		Ձեռնարկության արտանետում		Զարկային արտանետում		
		գ/վրկ	տ/տարի	տ/տարի	գ/վրկ	տ/տարի
1.	Փոշի անօրգանական (SiO ₂ 20-70%)	4,31	95,59	0,784	4,31	96,374
2.	Ածխածնի օքսիդ	1,074	16,09	0,256	1,074	16,346
3.	Ազոտի օքսիդներ	0,179	2,68	0,078	0,179	2,758

7. ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑԱԴՈՒՄՆԵՐԸ

Համաձայն PՃ 52.04.52-85 առաջարկությունների, անբարենպաստ օդերևութաբանական պայմաններում (ԱՕՊ) նախատեսվում են միջոցառումներ՝ ուղղված մթնոլորտի մակերևութային շերտում աղտոտող նյութերի կոնցենտրացիաների նվազեցմանը: Արտանետումների կարգավորումը կատարվում է անբարենպաստ օդերևութաբանական պայմանների կանխատեսման հիման վրա: Կազմակերպությունում արտանետումների կարգավորման հարցը ղեկավարության հրամանով դրվում է պատասխանատու անձի վրա, ով պետք է մշտական կապ պահպանի Հիդրոմետժառայության հետ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ արտանետումների նվազեցմանն ուղղված միջոցառումներն են.

1. Ձեռնարկության կարգավարի կողմից սպասարկող անձնակազմին տրվում են անբարենպաստ օդերևութաբանական պայմանների առաջացման հնարավորության մասին տեղեկություններ,
2. Նշված պայմաններում ձեռնարկությունում պետք է իրականացվեն ներքոհիշյալ միջոցառումների ծրագրերը:

Ի ռեժիմ

Բացահանք

Նախատեսվում է վնասակար նյութերի արտանետումների կոնցենտրացիաների կրճատում 15-20%: Անրաժեշտ է կատարել հետևյալ միջոցառումները.

- ✓ Ուժեղացնել հսկողությունը բացահանքում տարվող աշխատանքների ռեժիմի նկատմամբ,
- ✓ Արգելել սարքավորումների, տեխնիկայի աշխատանքը գերբեռնվածության ռեժիմով,
- ✓ Կատարել լեռնային զանգվածի և մերձատար ճանապարհների ջրցանում:

Գործարան

- ✓ Տեխնոլոգիական գործընթացների վերահսկում,
- ✓ Սահմանել խիստ վերահսկողություն օդափոխության համակարգերի և փոշեզազառոսիչ սարքերի աշխատանքի վրա:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների տևական գործողությունների և կատարված միջոցառումների անբավարարության դեպքում անհրաժեշտ է անցնել ձեռնարկության II և III ռեժիմներով աշխատանքին:

II ռեժիմ

Բացահանք

- ✓ Կատարվում են բոլոր աշխատանքները, որոնք նախատեսված են I ռեժիմով՝ կրճատելով արտանետումների քանակը 20-40%-ով,
- ✓ Կրճատել բեռնման և բեռնաթափման աշխատանքները,
- ✓ Կրճատել տրանսպորտի երթևեկությունը:

Գործարան

- ✓ Ջարդման արտադրամասի արտադրողականությունը կրճատել 10-15%-ով:

III ռեժիմ

Բացահանք

- ✓ դադարեցնել պայթեցման աշխատանքները:

Գործարան

- ✓ Ջարդման արտադրամասի արտադրողականությունը հնավորինս կրճատել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 1999 թվականի մարտի 30-ի N 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի N 953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին » ՀՀ կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի N1673-Ն որոշում:
2. «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը»՝ հաստատված ՀՀ Կառավարության 2005թ. հունվարի 25-ի N91-Ն որոշում
3. Методика расчёта выбросов загрязняющих веществ в атмосферу от предприятий по производству строительных материалов. Казахстан 2008г.
4. Методика расчеты вредных выбросов (сбросов) для комплекса оборудования открытых горных работ, Люберцы 1999г.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Ленинград, 1986г.
6. ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» շինարարական նորմերը հաստատելու եվ հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» 2011թ սեպտեմբերի 26-ի N 167-Ն ՀՀ քաղաքաշինության նախարարի հրաման
7. ՀՀ Բնապահպանության նախարարություն: Հայեկոմոնիտորինգ: ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ:
8. ОНД-86 Госкомгидромет. Методика расчета концентраций в атмосферном воздухе вредных веществ, содержащихся в выбросах предприятий. Л., Гидрометеиздат, 1987г.,

ՀԱՎԵԼՎԱԾ

Տեղանքի ռելիեֆի գործակցի հաշվարկը

